

Մամնայի *պակասման* (= մահվան) կապակցությամբ նրանց հոգու բարեխոսության համար Սանահնի վանքին է տալիս Աբլասադանց ծուխը ու 25 օրավար հող և արգելում է (= *նզովաւք փակեցաք*) որ որևէ մեկը փորձի նրանց ազատել ճորտական ծառայությունից:

Ավագյանը վիճագիրը քննարկել է 8-րդ տողում *նացա, սացա* դերանունների հնչյունափոխված տարբերակների և շահ ու զենով՝ օգուտով ու վնասով, բարոյության բառաքնության կապակցությամբ:


## ԾԱԹԵՐ

Անվան ուղիղ ձևն է Ծաղեր՝ առաջացած այստեղ բնակվող «ծագումով, լեզվով և գրով հայ, բայց դավանանքով և կենցաղավարությամբ հույն»<sup>65</sup> հերձվածող-աղանդավորների անվանումից, որին հետևում էին թե՛ հայերը և թե՛ հույները:

Միաբնակությունից խուսափող քաղկեդոնիկ Ծաթերը գյուղի հուշարձանների պատառիկներն ամենևին չեն խոսում դավանական այդ ուղղության օգտին:

Բնակավայրը Դեբեդի ծախ կոչվում է, Արևածագ գյուղի հարևանությամբ, որտեղ կարևոր հուշարձաններ չկան: Հարավային եզրում գտնվում է հին գերեզմանատունը, որի մեջ կանգնած են երկու փոքր եկեղեցիներ՝ իրար մոտ: Կոչվում են Ա. Նշան: Առաջինը թաղածածկ է, ունի բազմաթիվ նորոգումների հետքեր, որոնց ընթացքում օգտագործել են ինչպես հին շենքերի քարեր, նույնպես և գերեզմանաքարեր ու խաչքարեր: Երկրորդը՝ հյուսիսային կողմինը, ավերակ է: Նրա արևելյան մասը նորոգել, դարձրել են էլեկտրական հոսանքի կարգավորման կայան: Պատերը շարվել են շրջապատից վերցրած տապանաքարերով ու խաչքարերով:

746. *ԵԿԵՂԵՑԻ*, հյուսիսային պատի մեջ դրված սպիտակավուն քարի վրա, 6 տող

ՏՐԱԾԱԳԵՂԱՌՆԻՄ ԷՄԱՌԱՋ  
ՆՈՂԵՅԶԵԿԵՆՅԱՍԱԼԵՅ:Ճ:ՍԴ  
ՈՒ:Ա:ՉԱԵԿԻՆԱՋԱՋԱՅՅԵԽԵԼԵՆ  
ՋԵՆՄԻՄԵՆՆԱՐՋԱՅՅԵԼԵՆՈՎ . . .  
ԱԾԵՆ:ՅԺԸ:ՃԱՅԱՊԵՏԱՅՆԻԹ:Լ:  
ԷՄԱՆՍԿԷ . ԼԵ  ՉԻՉ

ՏՐ ԱԾ ԱԻԳԵ ՊԱՐՈՆ ԳՈՐԳԷ, ՈՐ ԱՌԱՋ-  
ՆՈՐԴԵՅ ՋԵԿԵՂԵՑԻՍ ՍԱԼԵՅ :Ճ: (100) ՍՊԻՏԱԿ  
ՈՒ :Ա: (1) ՉԱՐԵԿԻ ՀՈՂ ԱՋԱՏ՝ ՅԵԿԵՂԵՑԻՍ ԵՐԵՏ:  
ՋԵՏՆԻ ՈՒՄԻԵՆՆ ԺԱՄ ՆՐՋԻՍԻՆ ԱՐՆԵՆ: ՈՐ ԽԱԾՄՆԵՆ ՆՁՈՎ  
ԱԾ ԵՆ :ՅԺԸ: (318) ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ: Ի ԹՎ ԻՆ՝ ՀԱՅՈՑ  
:ՉԽՁ: (1297): ՎԱՐԴԱՆՍ ՎԱՋԱՅԵԼ ԵՏՈՒ:

Հրատ. Ավագյան, ՎԱԲ, 271 (առաջին երեք տողերը):

<sup>65</sup> Հարցի հանգամանալի քննարկումը տես Հ.Գ. Մանուչարյան, Պողոս Տարոնացի, Եր., 1982, էջ 96-105:

**Ծանոթ.** Արձանագրությունը կրող քարը եկեղեցու դռան բարավոր է: Ստորին մասում ունի կիսակլոր բացվածք: Վերջին տողում կազմել տվողի անունը հիշեցնում են խաչ-քարային հիշատակագրությունները, բայց այս դեպքում խոսքը վերաբերում է արձանագրության տեքստը կազմելուն:

Շինարարա-նվիրատվական վկայագրից պարզվում է, որ Գորգեն (որը տեղական պաշտոնյա է, Սամիկոնյանների վասալ-գործակալը), կազմակերպել է (= առաջնորդեց) եկեղեցու սալահատակման գործը, 100 արծաթադրամ և մեկ չարեկ (չարեթ)՝ մեկ օրավար հողակտորի մեկ քառորդ մասը ընծայել (= երեստ) եկեղեցուն՝ ազատ հարկից: Գորգեն՝ որպես իշխանավոր, բանիցս հիշատակված է շրջակա գյուղերի վիմագիր արձանագրություններում: Նրջիսը Գորգեի մերձավորներից է, երևի կինը, իսկ Ջաքարյանների նույնանուն քույրը մահացած էր 1230-ական թվ.:

Ի դեպ, չորրորդ տողի *գետնի ումիենն ժամ Նրջիսին պրնեն* կապակցությունը մեկնաբանելի է, որ եկեղեցին սալելուց և նվերներ ընծայելուց հետո (= *գետնի*) բոլոր ժամերը (= *ումիենն ժամ*), պատարագները Նրջիսի համար կատարեն (= *պրնեն*):

*Լուսանկարի ուշադիր զննությամբ չորրորդ տողի սկզբում բավական որոշակի կարդացվում է ՋԵՏՆՈՒԹԵՆՆ, ԹԵՐԼԱ ՎԵՏԹ Է ԿԱՏԿԱՆԱՂ ԴԱՅՏՆՈՐՅԱՆ ՏՈՆԻՆ (ԽՄԲ.):*

**747. ԵԿԵՂԵՑԻ.** Կյուսիսային պատին, երկու մեղ քարերի վրա, վերին մասը ջարդված, նախորդին կից արևելակողմից, 3 տող.

ԶԵ  
ԽԱՓԼԵՆ ԶՈՎԱԾԷԻՅԱԸ ԱԾ  
ԵՄՆԱՏԱԾԷՆԱԻ ԴՆԵՑԻԿԶ Զ

..... Ի ԶԵՎԵՂԵՑԻՍ:

[ՈՎ] ԽԱՓԱՆԵ՝ ՆԶՈՎԱԾ Է Ի ՅԱՍՏՈՒԱԾԱԾՆՈՅ:

ԵՍ՝ ՇԱԴԱՍԵՆ ՈՒԵԵՑԻ: [ԹՎԻՆ] ՈԿԶ (1617):

**Ծանոթ.** Արձանագրության սկիզբը՝ եկեղեցին նորոգելու մասին, ոչնչացված է: Տառերի ակոսները լցված են կրաշաղախով, և *Շահաստն Ուշեցի* մնում է երկմտելի, որը կարող է ընթերցվել նաև՝ *Շահաստ Նոր շինեցի*, կամ՝ *Շահասեն, որ շինեցի*:

Համաձայն *լուսանկարի*՝ երրորդ տողում, անձնանունը կարդացվում է ՇԱԴԱԾԷՆ, (Ծ-ն կարելի է կարդալ Ս, բայց պատիվ նշանով), այնուհետ, ոչ թե միատառ ՈՒ, այլ՝ ԱԻ, իսկ Ը-ից հետո (որ կարելի է կարդալ նաև Դ) որոշակի երևում է Ն-ն: Այս հատվածում ենթադրաբար առաջարկում ենք ԵՍ ՇԱԴ ԱՍՏՈՒԱԾԷՆ ԱԻՐ[Դ]ՆԵՑԻ վերծանությունը: Թվականից հետո, աջ քարին գրված է երկու տառ. առաջինը նման է Թ-ի, երկրորդը որոշակի Վ է: Այսինքն ԹՎԻՆ բառը պետք է վերականգնել թվականից հետո: Հարկ ենք համարում նշել, որ այստեղ գործ ունենք երկու վիմագիր տեքստերի հետ: Բացի այն որ երկրորդ տողն իր բովանդակությամբ նզովքի բանաձև է, որ հիմնականում գետեղվում էր տեքստի վերջում, խիստ տարբեր են նաև երկրորդ և երրորդ տողերի տառաձևերը (ԽՄԲ.):

748. ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային պատի արևմտյան անկյունում մի քարի վրա խազգրեր և ապա 1 տող.

ՀԻՈՄ ԱՌ ՍԲ ՆՀԱԽ Է ՀՈՈՍԱՐՈՒ ՍԲ ՆՀԱՆԻՆ Է:

Ծանոթ. ժե դարի գրչություն է: Հռոմարու հավանաբար Հռոմայրու տեղական արտասանությունն է: Նշմարվում են երկրորդ տողի տառահեռքերը, որոնք չեն կարդացվում:

749. Նույն քարի ծախ կտորին, խաչանշանի բոլորքում, անշուք գրերով, դժվարընթեռնելի ու երկմտելի, 2 տող.

ԱԾ ՈՂՈՐՄԵԱՅ ՊԱ

ՊԱՔԻՆ Ի ՔՍ:

750. ԽԱՉՔԱՐ. ագուցված երկրորդ եկեղեցու արևմտյան պատին, արտաքուստ. քիվին, ճակատին և նիստերին.

ԿԱԼԱՅԵՈՂ ՄԽՈՒՄ ԶԲՊԱՆՈՆ

ԿԱՍԱԽԼՆ ԱՅ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՍ Ե ՊԱՐՈՆ  
 ԳՈՐԳԷ, ԵՍ՝ ԴԵՂՍ, ԵՒ ՈՐԴԻ ԻՍ ԲՈՒԲԱ, ԿԱՆԿՆԵՑԱՔ  
 ՍԲ ԱՍՏՈՒԱԾԱՅԾԻՆՍ ՅԻՇԱՏԱԿ ՄԵՁ ԵՒ ԾՆՈՂԱՑ  
 ՄԵՐՈՑ: Ի ԹՎԻՆ: ԶԾԲ: (1303):  
 ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԵՔ:  
 ՊՈԱԻՇ:

ԿԱՍԱԽԼՆ ԱՅ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՍ Ե ՊԱՐՈՆ  
 ԳՈՐԳԷ, ԵՍ՝ ԴԵՂՍ, ԵՒ ՈՐԴԻ ԻՍ ԲՈՒԲԱ, ԿԱՆԿՆԵՑԱՔ  
 ՍԲ ԱՍՏՈՒԱԾԱՅԾԻՆՍ ՅԻՇԱՏԱԿ ՄԵՁ ԵՒ ԾՆՈՂԱՑ  
 ՄԵՐՈՑ: Ի ԹՎԻՆ: ԶԾԲ: (1303):  
 ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԵՔ:  
 ՊՈԱԻՇ:

Ծանոթ. Վերջին բառը գրված է քիվի և խորանի միջև, 4 խաչերի արանքում: Պռաւշը խաչքարագործ վարպետն է: Պարոն Գորգէն որպես իշխանավոր հանդես է գալիս նախորդ և Իգահատի ձորի մի շարք արձանագրություններում: Աստվածածինը խաչքարի անունն է:

Տարակուսելի է Բուբա անծնանվան վերծանությունը, թվում է թե գրչագրում ավելի ճիշտ է (խմբ.):

751. ԽԱՉԱՐԵԿՈՐ. նույն եկեղեցու արևելյան պատին, թևերից վեր, 1 տող.

ԹԻՆ ՌԿԶ ԹՎԻՆ ՌԿԶ (1617):

752. **ԽԱՉՔԱՐ.** Կանգնած է գյուղի հյուսիսային կողմի հնագույն գերեզմանատան մեջ, ճակատին, 1 տող.

ՏՐ ԱԾ ① ՅՍ+Ս ՏՐ ԱԾ ՅՍ ՔՍ:

753. **ԽԱՉՔԱՐ.** գյուղից 1 կմ հարավ-արևելք, ծորի մեջ, «ճգնավորի» մատուռի արևելյան պատի մեջ, մակերեսին, 5 տող.

ՅԻՇԵՑԵՔ

Ի ՔՍ:

ԵՍ՝ ՋԱՔԱՐԷ

Ս, ԿԱՆԳՆԵՑ

Ի ՍՔ ԽԱՉՍ:

ԱՐԵՎԱԾԱԳ

Անցյալում գյուղը կոչվել է Նոր Ուզունլար, Ներքին Ուզունլար, Ղաչաղան:

Գյուղի տարածքում ճարտարապետական հուշարձաններն առանձնապես շատ չեն: Առավել կարևորը գյուղի հարավակողմում գտնվող հանգստարանն է: Այստեղ կա մի մատուռ, որի տանիքը չի պահպանվել, և այժմ այն փայտածածկ է: Ս. Բարխուդարյանը ենթադրում էր, որ «մոտիկ մի տեղում կանգնած է եղել Ս. Սարգիս անունով մի խաչքար, որը կանգնեցվելուց հետո նրա անունով շինել են այս մատուռը և պատի մեջ էլ օգտագործել նրա արձանագրված պատվանդանը»:

Այդ պատվանդանի արձանագրության մեջ Ս. Սարգիս անունը հիշատակված է և չի բացառվում, որ հենց այս պարագան մատուռի անվանակոչման գործում ունեցել է իր դերը:<sup>66</sup>

754. **ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏԿԱՆԴԱՆ.** ագուցված Ս. Սարգիս մատուռի արևելյան պատի հարավային անկյունում, 6 տող.

ԻՆՅՐՔՎ ԱՅԱՆՈՒԹ ԵՆՅԱՅ ՈՅԵՍԱՐԱԿՈՍ  
 ԵՆՈՆԳԵԱԼՔԱՅ ԱՆԱԿԱՅ ԵՑՈՒԼՐԲ ՍԱՐ  
 ԳԻՍԲԱՐԵԽԱՍՈՒԹԻ  
 ՔՐԳՈՐՆՅԻՐՈՐԵՑՆԱՐԵԱՍՈՒԹԵՆ ՆՈԳՈ ՅԻՆՈՅԵՆ  
 ԱՅԵԼՂԱՇԱՅԱՅԻՆՈՐԿԱՐԴԱՔՅԻՆԵՑԷԲՍՈՒՅԻՆ  
 ՈՒ  
 ՔԱՆԴԻԵԱ Ա)

Ի ՆՅ: (1021) ԹՎԱԿԱՆՈՒԹԵ[Ա]Ն[Ս] ՀԱՅՈՑ, ԵՍ՝ [ԿԻ]ՐԱԿՈՍ  
 ՄԵՂՈՒՑԵԱԼ ՔԱՀԱՆԱ, ԿԱՆ[Կ]Ն[ԵՑ]Ի՝ ՍՈՒՐԲ ՍԱՐ  
 ԳԻՍ[Ի] ԲԱՐԵԽԱՄՍՈՒԹԻ[ԻՆ]  
 ՔՐ[Ի]ԳՈՐՈՅ, ԻԻՐ ՈՐԴԵՑՆ ԱՐԵԺԱՏՈՒԹԵ[Ա]Ն ՀՈԳՈՅ ԻՍՈՅ ԾԱՂՈՂ  
 ԱՑ ԵՒ ՋԱԿԱԿԱՑ ԻՍՈՑ: ՈՐ ԿԱՐԴԱՔ՝ ՅԻՇԵՑԵՔ Ի ՔՍ ՈՒ ՅԻՇ  
 ԷԱՔ ՍԱՍՈՒԷԼԱ Ի ՔՍ:

**Ծանոթ.** Արձանագրության իմաստը հստակ է, իսկ *Սամուելը* խաչքարագործ վարպետն ու գրիչն է:

*Կասկածելի է վերջին տողի վերծանությունը (խմբ.):*

<sup>66</sup> Սողաբաբեր Ալ. Սանուշարյանինն է, Ս. Բարխուդարյանի կարծիքը հղված չէ (խմբ.):